Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ԵԱՀԿ Բուդապեշտի, Լիսաբոնի, Ստամբուլի գագաթաժողովներում (1994-1999 թթ.)

Գևորգյան Մ.Գ.
ԵՊՀ Հայոց պատմության ամբիոն (Հայաստան, Երևան)
marine.gevorgyan@ysu.am

Վճռորոշ բառեր՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարց, ԵԱՀԿ գագաթաժողովներ, Բուդապեշտ, Լիսաբոն, Ստամբուլ, Մինսկի խումբ, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան, բանակցային գործընթաց, տարածքային ամբողջականություն

Нагорно-Карабахская проблема в саммитах ОБСЕ - в Будапеште, Лиссабоне, Стамбуле (1994-1999 гг.)

Геворкян М.Г.
ЕГУ, кафедра истории армянского народа (Армения, Ереван)
marine.gevorgyan@ysu.am

Резюме: В этой статье обсуждается проблема Нагорного Карабаха на трех саммитах ОБСЕ в Будапеште, Лиссабоне, Стамбуле, которые проходили в 1994, 1996 и 1999 годах. Мы затронули особенности урегулирования нагорно-карабахского конфликта на этих саммитах, подчеркнули достижения и упущения армянской стороны, а также важность резолюций, принятых на этих саммитах в контексте урегулирования конфликта. Благодаря военным и дипломатическим победам в 1994 году Нагорный Карабах был признан саммитом ОБСЕ в Будапеште как полноправная сторона, с чего начался процесс международного признания Нагорно-Карабахской Республики. В 1996 на Лиссабонском саммите решение арцахской проблемы было связано с территориальной целостностью Азербайджана, которая не была принята армянской стороной. В статье также представлены предложения пакета ОБСЕ, поэтапного и общего государства, направленные на разрешение конфликтов. Последний саммит ОБСЕ в 20 веке был в Стамбуле, который был воспринят как поражение армянской дипломатии. В 1999 году армянская сторона подписала «Хартию» ОБСЕ, в которой Нагорный Карабах был выведен из переговорного процесса, что было шагом назад по сравнению с достижениями двух предыдущих саммитов.
Ключевые слова: Нагорно-карабахский вопрос, саммит ОБСЕ, Будапешт, Лиссабон, Стамбул, Минская группа, Республика Армения, Азербайджан, переговорный процесс, территориальная целостность

Nagorno Karabakh Problem in OSCE Budapest, Lisbony, Istanbul Summits (1994-1999)

Gevorgyan M.G.
YSU, The chair of armenian history (Armenia, Yerevan)
marine.gevorgyan@ysu.am

Abstract: This article discusses the Nagorno-Karabakh issue at three OSCE Summits in Budapest, Lisbon, Istanbul, which took place in 1994, 1996 and 1999. The peculiarities of the Nagorno Karabakh conflict settlement were analyzed at these summits, the achievements and shortcomings of the Armenian side were highlighted, as well as the importance of the resolutions adopted at those summits in the context of the conflict settlement. Due to the military and diplomatic victories in 1994, Nagorno Karabakh was recognized by the OSCE Budapest summit as a full-fledged conflict. This led to the international recognition of the Nagorno Karabakh Republic's right to self-determination. In 1996 at the Lisbon summit, the solution of the Artsakh issue was connected with the territorial integrity of Azerbaijan, which was not accepted by the Armenian side. The article also presents the proposals of the OSCE package, step-by-step and general state aimed at conflict resolution. In the 20th century the last OSCE summit in Istanbul was perceived as a defeat of the Armenian diplomacy. In 1999, the Armenian side signed the OSCE "Charter" in which Nagorno Karabakh was pulled out of the negotiation process, which was a backward step compared to the achievements of the previous two summits.
Keywords: Nagorno Karabakh issue, OSCE Summits, Budapest, Lisbon, Istanbul, Minsk Group, Republic of Armenia, Azerbaijan, negotiation process, territorial integrity

1992-1994 թթ. ընթացող արցախյան ազատագրական մարտերն ավարտվեցին կրակի դադարեցման մասին 1994 թ. մայիսի 12-ին ուժի մեջ մտած Բիշկեքյան արձանագրությամբ[1]: Այդ ժամանակահատվածում դրանով դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որն այսօրվա դրությամբ էլ շարունակվում է: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացը դարձավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա:

Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը (մինչ 1994 թ. դեկտեմբերը՝ Խորհրդակցություն) անվտանգության հարցերով զբաղվող աշխարհի ամենախոշոր տարածաշրջանային քաղաքական կազմակերպություններից է, որին անդամակցում են Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի 56 պետություններ[2]: Դեռևս 1992 թ. հունվարին նորանկախ Հայաստանը դարձել էր եվրոպական անվտանգության համակարգի կարևորագույն այս կառույցի անդամը:

Բանակցային գործընթացում ձևավորվել է ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի մշտական անդամներն են համանախագահող երկրները (Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա և Ռուսաստանի Դաշնություն), Բելառուսը, Գերմանիան, Իտալիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Թուրքիան՝ Հայաստանի և Ադրբեջանի հետ միասին, ու ԵԱՀԿ եռյակը՝ հերթագայության կարգով[3]:

ԵԱՀԿ գագաթաժողովներում ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ առաջին անգամ հիշատակվել է 1994թ. դեկտեմբերի 5-6-ը Բուդապեշտում տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Բուդապեշտի գագաթաժողովի արդյունքում ընդունվեց «Նոր դարաշրջանում իրական գործընկերության ճանապարհին» խորագրով հռչակագիրը[4]: Տարածաշրջանային հարցերին նվիրված որոշումների հատվածում Ղարաբաղյան հակամարտությանը հատուկ տեղ հատկացվեց «ԵԱՀԽ գործունեության ակտիվացումը՝ կապված ղարաբաղյան հակամարտության հետ» բաժնում: Գագաթաժողովում ընդունված «Տարածաշրջանի խնդիրների մասին» որոշման մեջ ի թիվս այլ հարցերի, արծարծվեց նաև Ղարաբաղյան հակամարտության գոտի խաղաղարար ուժեր ուղարկելու հարցը[5]: Որոշման 2-րդ գլխի 4-րդ կետում («Տարածաշրջանային հարցեր») նշված էր, որ «հակամարտության կարգավորումը հնարավորություն կտար խաղաղապահ բազմազգ ուժեր տեղակայել՝ որպես համաձայնության իրականացման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Այդ համատեքստում որոշվել էր ձևավորել Բարձր Մակարդակի Ծրագրման Խումբ (ԲՄԾԽ), որին հանձնարարված կլինի խորհրդատվություն մշակել, այդ թվում նաև այդ ուժերի ծավալի և հատկանիշների, հրամանատարության, դրանց ղեկավարման, նյութատեխնիկական ապահովման վերաբերյալ»[6]:

Երկարատև քննարկումները, սակայն, հանգեցրին նրան, որ հակամարտության գոտում խաղաղարար ուժերի տեղակայման հարցն ընդհանուր հավանության չարժանացավ: Հակառակ դեպքում էլ՝ հայտնի չէր բազմազգ զինուժի օգտակարության գործակիցը ՀՀ և ԼՂՀ համար ինչպիսին էր լինելու (կարծում ենք ավելի շատ բացասական, քան դրական, քանի որ թուրքական կողմը կարող էր այդ զինուժում գերակշռող լիներ, ինչ էլ վտանգում էր Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը- Մ.Գ.): Մի բան ակնհայտ է. բազմազգ զինուժն ունի մի շարք թերություններ (օրինակ լեզվական պատնեշ, ռազմական մեթոդաբանության տարբերություններ և այլն), որոնք բացասաբար կարող էին անդրադառնալ հակամարտության ընթացքի վրա: Բացի այդ, կար նաև մեկ այլ խնդիր՝ կապված այդ խաղաղապահ ուժերի տեղակայման ժամկետների շուրջ: Ինչպես ԲՄԾԽ-ի սպաներն էին փաս-

[1] Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994), հանրագիտարան, Եր., 2004, էջ 28:

[2] Who we are, www.osce.org

[3] Միջազգային կազմակերպություններ, ուսումնական ձեռնարկ, Եր., 2012, էջ 48:

[4] От Хелсинки до Будапешта. История СБСЕ/ОБСЕ в документах.1973-1994, в трех томах, т. 3, М., 1996, с. 24.

[5] Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը. պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, խմբ.՝ Հարությունյան Ա., Եր., 2006, էջ 59-60:

[6] Декларациа Будапештской встречи на висшем уровне , с. 8-9, http://www.osce.org/ru/mc/39558?download=true

տում «ևս մեկ անգամ պետք է ընդգծել, որ Ղարաբաղյան գործողությունը կտևի միայն հաստատված ժամանակահատվածում և կդադարեցվի հնարավոր ամենավաղ պահին»[7]: Փաստորեն, ստացվում է, որ այդ զինուժի տեղակայման կարճատևությունը անիմաստ էր դարձնելու ամբողջ խաղաղապահ գործունեությունը:

Անդրադառնալով Բուդապեշտի բանակցությունների այլ օրակարգային հարցերին՝ նշենք, որ այստեղ քննարկման էր ներկայացվել նաև գերմանա-հոլանդական մի առաջարկ «Կինկել-Կույմանսի նախաձեռնություն» անվան տակ[8], (փոփոխության նախաձեռնողներն էին Գերմանիայի և Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարներ Կլաուս Կինկելն ու Պիտեր Կույմենսը: Նախագիծը նրանց անունով էլ կոչվում էր-Մ.Գ.): Այն նախատեսում էր «կոնսենսուս մինուս մեկ» բանաձևը:

Ինչպես հայտնի է, ԵԱՀԿ-ն կոնսենսուսով գործող կառույց է և երբ կազմակերպության անդամ ավելի քան հինգ տասնյակ երկրներից մեկն անգամ դեմ է լինում որևէ փաստաթղթի, իսկ մյուս բոլորը՝ կողմ, այդ մեկ երկիրը կարող է վետո կիրառել, ինչից հետո փաստաթուղթը չի ընդունվում: Գերմանա-հոլանդական նախաձեռնությունը ընդունելու դեպքում գործելու էր «կոնսենսուս մինուս մեկ» բանաձևը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը (ղեկավար՝ ԱԳՆ տեղակալ Վ. Օսկանյան) դեմ էր կոնսենսուսի սկզբունքի փոփոխությանը, քանի որ դա լուրջ հարված կլիներ Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին:

Բացի ՀՀ-ից, այլ երկրներ (այդ թվում և Ռուսաստանը) ևս դեմ էին այդ նախաձեռնությանը, հասկանալով, որ դա կարող է իրենց դեմ ևս աշխատել: Սակայն, ղարաբաղյան չլուծված հակամարտությունը և տվյալ բանաձևի ընդունման դեպքում հետագա սպառնալիքները նկատի ունենալով՝ հայկական կողմը ձգտում էր նրան, որ ԵԱՀԿ-ն շարունակի մնալ կոնսենսուսով գործող կազմակերպություն: Դա էր պատճառը, որ ՀՀ-ն դեմ արտահայտվեց և վետո դրեց հիշյալ բանաձևի կիրառմանը:

Պետք է ընդգծել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցություններում Հայաստանը որդեգրել էր սկզբունք, ըստ որի «ՀՀ-ն կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Ղարաբաղի ժողովրդի համար և ստորագրված ԼՂՀ ղեկավարության կողմից»[9]:

Ի կատարումն Բուդապեշտի գագաթնաժողովի որոշումների՝ 1995 թ.-ի մարտի 31-ին ԵԱՀԿ Ավագ պաշտոնատար անձանց ընդունած փաստաթղթում Լեռնային Ղարաբաղն առաջին անգամ հիշատակվել է որպես հակամարտության առանձին կողմ (սա, թերևս, բանակցային փուլում առաջին լուրջ հաղթանակն էր հայկական դիվանագիտության համար), իսկ 1995-ի օգոստոսին նշանակվել է ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով զբաղվող ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, որը պետք է աջակցեր հիմնախնդրի քաղաքական կարգավորմանը և զինադադարի պահպանմանը:

Ընդհանուր առմամբ Բուդապեշտի գագաթնաժողովը ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիների շուրջ կարելի է գնահատել կառուցողական: Գագաթաժողովը որոշակիորեն դրական ազդեցություն է ունեցել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացում, սակայն նույնիսկ այնտեղ ընդունված որոշումները և հիմնադրված մարմիններն ի վիճակի չեղան հասնելու հակամարտության վերջնական կարգավորմանը:

Ղարաբաղյան հակամարտությունը քննարկվել է նաև 1996թ. դեկտեմբերի 2-3-ը տեղի ունեցած Լիսաբոնի գագաթաժողովում: Այստեղ Ռուսաստանը և Արևմուտքը միասնական դիրքորոշում որդեգրեցին և պաշտպանեցին կազմակերպության գործող նախագահ, Շվեյցարիայի արտգործնախարար Ֆլավիո Կոտտի նախաձեռնությունը: Լիսաբոնի գագաթաժողովի հռչակագրի 20-րդ կետը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղին[10]: Հայտնի է, որ այդ կետով ՀՀ համար իրավիճակը

[7] Vilen, Heikki, Mike Karie and Roger Biesel, Preparations of a Peacekeeping Mission for the Nagorno-Karabakh Conflict by the OSCE's High Level Planning Group, May, 2006.

[8] OSCE. Documents 1973-1997.Organization for Security and Co-operation in Europe.CD-Rom.

[9] Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը. պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, խմբ.՝ Հարությունյան Ա., էջ 62-63:

[10] LISBON DOCUMENT 1996, http://www.osce.org/mc/39539?download=true

ծանրանում էր և նմանվում փակուղու, հատկապես ադրբեջանական կողմի փոխադարձ վետո կիրառելու սպառնալիքի պարագայում: Լարվածությունը նահանջեց, երբ ԱՄՆ պատվիրակությունն առաջարկեց վիճահարույց քսաներորդ հոդվածը հանել եզրափակիչ հռչակագրից և այն հրապարակել իբրև ԵԱՀԿ Գործող նախագահի Պ.Կոտիի հայտարարություն: ԼՂ կարգավորման հարցում ներկայացվեց երեք կետանոց մի փաստաթուղթ, որում ընդունվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու նրա կազմում Արցախի բարձր ինքնավարությունը: Այդ կետերը հետևյալ էին.

- Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականություն,
- համաձայնագրում հաստատված, ինքնորոշման իրավունքի վրա հիմնված Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակ, որը նրան ինքնավարության բարձր աստիճան է ապահովում Ադրբեջանի կազմում,
- Լեռնային Ղարաբաղի ու նրա բնակչության երաշխավորված անվտանգություն, այդ թվում բոլոր կողմերի փոխադարձ պարտավորություն՝ կատարելու համաձայնագրի բոլոր կետերը[11]:

Փաստորեն, Կոտիի հայտարարության մեջ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման վերաբերյալ ներկայացված սկզբունքները համընկնում էին Ադրբեջանի մոտեցումներին և անընդունելի էին ՀՀ ու ԼՂՀ համար: Այդպիսի հայտարարության պատճառը թերևս այն էր, որ Ադրբեջանը ճնշումներ էր գործադրել ԵԱՀԿ ղեկավարության վրա, որպեսզի Հայաստանին պարտադրվի այնպիսի փաստաթուղթ, որտեղ հավաստվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, իսկ Լեռնային Ղարաբաղը հիշատակվում էր որպես Ադրբեջանի անքակտելի մաս: Դա իր հերթին հետևանք էր այն փաստացի երևույթի, որ փաստաթղթում տեղ գտած այլ հակամարտությունների մեկնության մեջ հաստատվում էր նախ Ռուսաստանի, հետո Վրաստանի ու Մոլդովայի տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանական կողմը նույնպես ցանկանում էր նման արդյունքի հասնել: Այդ ձևակերպումն անընդունելի էր Հայաստանի համար, որն էլ քայլեր ձեռնարկեց՝ հռչակագրի 20-րդ կետի նկատմամբ վետո կիրառելու ուղղությամբ:

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Լիսաբոնում օգտվեց վետոյի իրավունքից՝ իր ելույթում ընդգծելով. «Ղարաբաղյան հիմնախնդիրը Ադրբեջանի կողմից առաջարկված սկզբունքների հիման վրա լուծելու դեպքում Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա կախված կլինի ցեղասպանության կամ բռնի տեղահանության մշտական սպառնալիքը: Սումգայիթի (1988թ. փետրվար), Կիրովաբադի (1988թ. նոյեմբեր) և Բաքվի (1990թ. հունվար) հակահայկական ջարդերի, ինչպես նաև Ղարաբաղի 24 հայկական գյուղերի բնակչության տեղահանության (1991թ. մայիս – հունիս) փորձը ամենայն ակներևությամբ ցույց է տալիս, որ Ադրբեջանը, չնայած բոլոր հավաստիացումներին, չի կարող Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության երաշխիքներ ապահովել: Ուստի, մենք այն կարծիքին ենք, որ նոր ողբերգության բացառման միակ հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգումն է»[12]:

ՀՀ պատվիրակության դիրքորոշումը ամրագրված էր նրա հայտարարության մեջ, ըստ որի ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարությունը չէր արտացոլում Մինսկի խմբի ոգին ու մանդատի էությունը, որը հաստատվել էր 1994թ.-ի Բուդապեշտի գագաթաժողովի ժամանակ և ենթադրում էր քաղաքական համաձայնության շուրջ բանակցություններ անցկացնել: Կարգավիճակի հարցը ուղիղ բանակցությունների ժամանակ քննարկման թեմա էր հանդիսացել, որոնք ավարտին չեն հասցվել: Բացի այդ հայկական կողմը հստակ ընդգծում էր, որ հայտարարության մեջ ԼՂ կարգավիճակ էր կանխորոշվում, ինչը հակասում էր ԵԱՀԿ Նախարարների խորհրդի որոշմանը: Հայկական կողմը պնդում էր, որ հակամարտության կարգավորումը կարելի է գտնել ԵԱՀԿ Հելսինկյան ակտում ամրագր-

[11] Заявление действующего председателя обсе, http://www.osce.org/ru/mc/39543?download=true

[12] Հակոբյան Թ., Կարգավորման բանակցային գործընթացը, www.civilnet.am/news/2016/06/25/կարգավորման-բանակցային-գործընթացը/295704

ված միջազգային իրավունքի և ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա[13]:

Ամփոփելով Լիսաբոնի գագաթաժողովի ունեցած դերը հակամարտության կարգավորման գործում՝ նշենք, որ, փաստորեն, այստեղ փորձ արվեց Արցախյան խնդրի լուծումը կապել Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ, որը հայկական կողմից չընդունվեց և բանակցությունները մտան փակուղի: ԵԱՀԿ-ն անհիմն ձևով Լեռնային Ղարաբաղը դիտում էր որպես Ադրբեջանին պատկանող տարածք: Պատմական փաստերի վերլուծությունը, սակայն, գալիս է ապացուցելու, որ իրականում ԵԱՀԿ կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքը պնդելը (նկատի ունենալով նրա կազմում ԼՂ-ն) չունի պատմական հիմք: Փաստը մնում է փաստ. Ադրբեջանի ԳԽ արտահերթ նստաշրջանը, որը 1991 թ. օգոստոսի 30-ին Բաքվում ընդունեց անկախության վերականգնման մասին հռչակագիր[14], ընդգծեց, որ Ադրբեջանի Հանրապետությունը հանդիսանում է ոչ թե Խորհրդային Ադրբեջանի, այլ 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի իրավահաջորդը: Ինչ է դա նշանակում. դա նշանակում է, որ Ադրբեջանը պետք է լիներ 1918-1920 թթ. սահմաններում, իսկ դա իր հերթին նշանակում է, որ նրա կազմում Լեռնային Ղարաբաղը չէր կարող լինել: Մյուս կարևոր փաստն այն է, որ ԼՂՀ-ն 1991 թ. սեպտեմբերի 2-ին իր անկախությունը հռչակել է Ադրբեջանին երբևէ չպատկանած տարածքների վրա, ուստի Լիսաբոնյան փաստաթղթում տեղ գտած ձևակերպումները Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» վերաբերյալ կատարյալ անհեթեթություն էր: Ստացվում է, որ հակամարտության կարգավորմանն ուղղված հետագա բանակցություններում Ադրբեջանի նկատմամբ «տարածքային ամբողջականության» սկզբունքը կյանքում չի կարող կիրառելի լինել: Կարծում ենք, Լիսաբոնի գագաթաժողովում ձևավորված իրավիճակում կարևորն այն էր, որ Հայաստանը, օգտագործելով իր վետոյի իրավունքը, թույլ չտվեց վերջնական հայտարարության մեջ ադրբեջանամետ բանաձևի ամրագրումը: 1997 թ. մի քանի անգամ գումարված ԵԱՀԿ համաժողովներում քննարկումները հակամարտության կարգավորման շուրջ որևէ արդյունք չտվեցին[15]:

Մինչ անդրադառնալը ԵԱՀԿ 1999 թ. Ստամբուլի գագաթաժողովին, նշենք, որ 1997 թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Լիսաբոնից հետո ներկայացրին մի փաստաթուղթ, որում հերթական անգամ ԼՂ կարգավիճակը ներկայացված էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: *«Փաթեթային»* կոչվող փաստաթղթի առաջին մասը վերաբերում էր զինված հակամարտության դադարեցմանը, իսկ համաձայնագրի երկրորդ մասում լուծում էր տրվում ԼՂ կարգավիճակի հարցին, ըստ որի Լեռնային Ղարաբաղը պետական և տարածքային կազմավորում էր հանդիսանում Ադրբեջանի Հանրապետության սահմաններում (Լեռնային Ղարաբաղին թույլատրվում էր ունենալ սեփական սահմանադրություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ, զինանշան, դրոշ և հիմն): Սակայն, ինչպես և սպասելի ու տրամաբանական էր, ԼՂ կարգավիճակի հարցի դիտարկումը Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում լուրջ խոչընդոտ հանդիսացավ բանակցությունների հետագա ընթացքի համար և մերժվեց հակամարտության մասնակից երկու կողմերի՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների կողմից[16]:

Նույն՝ 1997 թվականին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացվեց ղարաբաղյան կարգավորման երկրորդ առաջարկը՝ *«փուլային»* եղանակով հակամարտող կողմերի միջև համաձայնության հասնելու ձևը: Ըստ այդ առաջարկի՝ առաջնային էր համարվում զինված հակամարտության հետևանքների վերացման հիմնախնդիրը, բուֆերային գոտու ստեղծման և միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխման, փախստականների և տեղահանված անձանց վերադարձի խնդիրները և այլն: Փաստաթուղ-

[13] Заявление делегации армении, http://www.osce.org/ru/mc/39543?download=true

[14] Տես НКР, История и современность, Степанакерт, 1998, с. 9.

[15] Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, փոքր երկրի մեծ մարտահրավերները, նախարարի օրագրից, Եր., 2013, էջ 169-170:

[16] Գալստյան Խ., Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), 2005 թ., էջ 65:

թը ենթադրում էր, որ այդ ամենից հետո «երեք կողմերը, վերջ դնելով հակամարտության ռազմական կողմին, համաձայնության են գալիս բարեխղճորեն շարունակել բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ մինչև հակամարտության մյուս ասպեկտների համապարփակ կարգավորումը, այդ թվում նաև քաղաքական ասպեկտը, որը ներառում է ԼՂ կարգավիճակի, ինչպես նաև Լաչինի, Շուշիի և Շահումյանի հիմնահարցերի լուծումը»[17]: Այս մոտեցումը որպես հիմք ընդունեցին ՀՀ-ն և Ադրբեջանի Հանրապետությունը, սակայն մերժվեց ԼՂՀ կողմից, քանի որ երաշխիքներ չկային, թե ԼՂ կողմից վերահսկվող տարածքների վերադարձից հետո ադրբեջանական իշխանությունների մոտ չէր անհետանա բանակցությունները շարունակելու պատրաստակամությունն ու ցանկությունը:

1998 թվականից սկսվեց ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը, երբ միջնորդները հանդես եկան *«ընդհանուր պետության»* առաջարկով: Դրա էությունը կայանում էր նրանում, որ նախկին Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում պետք է ստեղծվեր «ընդհանուր պետություն»[18]: Դա, ըստ համանախագահների, թույլ կտար համատեղել սահմանների անձեռնմխելիությունը և ազգերի ինքնորոշման սկզբունքը: Հայաստանն ու Ղարաբաղը նոր էին պատրաստվում կարծիք հայտնել փաստաթղթի առնչությամբ, երբ Ադրբեջանը կտրուկ մերժեց այն: Իհարկե, «ընդհանուր պետության» վերաբերյալ փաստաթուղթն ընդունելի չէր նաև հայկական կողմի համար, սակայն ՀՀ-ն և ԼՂՀ-ն համաձայնություն էին տվել այդ փաստաթղթին բանակցությունները փակուղի չմտցնելու համար: Չնայած այդ ամենին՝ բանակցային գործընթացը հերթական անգամ հայտնվեց փակուղում: Այնուամենայնիվ, ԵԱՀԿ ջանքերով 1999 թ. տեղի ունեցան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի ուղղակի շփումները: Միայն 1999 թ. նախագահները հանդիպել են 6 անգամ, այդ թվում՝

- ապրիլի 1-ին Մոսկվայում,
- ապրիլի 27-ին Վաշինգտոնում,
- հուլիսի 16-ին Ժնևում,
- օգոստոսի 22-ին Ժնևում,
- սեպտեմբերի 10-ին Յալթայում,
- հոկտեմբերի 11-ին Սադարակում[19]:

ԵԱՀԿ Մինսկի խմբի հաշվետվության մեջ համոզմունք էր հայտնվում այն մասին, որ այդ երկկողմ հանդիպումները բարձրացնում էին փոխվստահության մթնոլորտը կողմերի միջև, սակայն իհարկե, կարծում ենք, զուտ այդ հանդիպումները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ հակամարտության վերջնական կարգավորմանը հասնելու համար:

ԵԱՀԿ ջանքերով 1999 թ. նոյեմբերի 17-19-ին կայացավ 20-րդ դարում այդ կառույցի վերջին՝ Ստամբուլի գագաթաժողովը: Հայաստանը դեռևս Լիսաբոնի գագաթաժողովում «փակագծեց» Ստամբուլում հաջորդ գագաթաժողովն անցկացնելու Թուրքիայի առաջարկը՝ արտահայտելով իր վերապահումները տվյալ հարցի առնչությամբ, իսկ 1998 թվականին Հայաստանն արդեն պաշտոնապես դեմ արտահայտվեց գագաթաժողովը Ստամբուլում անցկացնելու գաղափարին: Այդ կապակցությամբ ՀՀ ԱԳ նախարարը հատուկ ուղերձ հղեց ԵԱՀԿ անդամ-պետությունների արտգործնախարարներին[20]:

Վիեննայում ԵԱՀԿ մշտական խորհրդում Ստամբուլի գագաթաժողովի հարցը դրվեց, այսպես կոչված «լռության ընթացակարգում», որի ավարտին Հայաստանը, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և ելնելով իր դիվանագիտական շահերից, միացավ կոնսեսուսի սկզբունքով ընդունված որոշմանը: ՀՀ պատվիրակությունը Ստամբուլի գագաթաժողովում գլխավորում էր ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը[21]:

Գագաթաժողովում ընդունվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում էին Եվրոպայի անվտանգությանը, ինչպես նաև ԵԱՀԿ տարածաշրջանային հիմնախնդիրներին: Դրանցից կարևորներն էին ԵԱՀԿ անվտանգության խարտիան, Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրը, ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովի հռչակագիրը, «Վստահության և անվտանգու-

[17] Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность, М., 2004, с. 156.

[18] ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ց. 5, գ. 84, թ. 46-47:

[19] ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ց. 5, գ. 84, թ. 114-115:

[20] Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը. պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, խմբ.՝ Հարությունյան Ա., էջ 72:

[21] Տե՛ս նույն տեղում:

թյան ամրապնդման միջոցների մասին Վիեննայի փաստաթուղթը»:

Ստամբուլի գագաթաժողովի կարևորագույն փաստաթուղթը դարձավ Եվրոպական անտանգության խարտիան, որը կոչված էր որոշելու 21-րդ դարի հրամայականների պայմաններում ԵԱՀԿ գործունեության հիմնական ուղղությունները[22]: Խարտիան պարունակում էր մի շարք դրույթների մեկնաբանություններ, որոնցից էին ընդհանուր մարտահրավերները, ընդհանուր ելակետային հիմքերը, ընդհանուր պատասխանը և ԵԱՀԿ գործիքները, իսկ Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրը համարվեց Եվրոպական անվտանգության անկյունաքարը:

Ստամբուլի գագաթաժողովի հռչակագրի երկու կետերը վերաբերում էին Հայաստանին, Ադրբեջանին և ղարաբաղյան հակամարտությանը: Մասնավորապես, հռչակագիրը սատարում էր ՀՀ և Ադրբեջանի նախագահների (Քոչարյան-Ալիև) երկխոսությանը[23]: 1999 թ. ընթացքում շատ էր խոսվում և գրվում, որ Ստամբուլի գագաթաժողովը ղարաբաղյան կարգավորման հանգրվանում կարող է ճակատագրական լինել: Գագաթաժողովին նախորդել էր Հայաստանի խորհրդարանում կատարված ահաբեկչությունը: Ստամբուլի գագաթաժողովին նախորդող և հաջորդող ամիսներին հայկական, ադրբեջանական և միջազգային մամուլում եղան բազմաթիվ հրապարակումներ, որ բանակցություններում քննարկվել էր Մեղրին Լաչինի հետ փոխանակելու հնարավորությունը: Ըստ դրա՝ Մեղրին տրվելու էր Ադրբեջանին, Լաչինը Ղարաբաղի հետ՝ Հայաստանին, Մեղրիով Հայաստանին տրվում էր սուվերեն ճանապարհ, որով Հայաստանը կարող էր հաղորդակցության մեջ մտնել Իրանի հետ, այսինքն՝ առանց հատելու Ադրբեջանի սահմանագիծը: Շատ էր գրվում, որ հենց Ստամբուլում պետք է ձեռք բերվեր նախնական համաձայնություն կարգավորման այն փաթեթի շուրջ, որը ստացավ «Մեղրիի տարբերակ» ոչ պաշտոնական անունը[24]:

1999թ. նոյեմբերի 19-ին Ստամբուլում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովում ի թիվս այլ փաստաթղթերի, ստորագրվեց նաև ԵՍԶՈՒ թարմացման մասին համաձայնագիրը, որը պետք է հաշվի առներ պայմանագրի գործողության շրջանակներում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունները: Նորացված պայմանագրում սահմանափակումներն արդեն մտցվում էին ոչ թե ռազմական դաշինքների, այլ առանձին երկրների համար: ԵՍԶՈՒ մասին այս համաձայնագիրը վավերացրել էին միայն Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը և Ուկրաինան: Արևմտյան երկրները հրաժարվում էին վավերացնել համաձայնագիրն այն պատրվակով, թե Ռուսաստանը չէր կատարում ԵԱՀԿ ստամբուլյան գագաթաժողովում ստանձնած քաղաքական պարտավորությունները Վրաստանից և Մոլդովայից իր ռազմականները դուրս բերելու վերաբերյալ[25]: Հայկական կողմի դիրքորոշումն այս հարցում այն էր, որ Հարավային Կովկասի ռազմականացումը զսպելու գործում ԵՍԶՈՒ մեխանիզմների իրական արդյունավետության առնչությամբ կասկածներ արտահայտելով հանդերձ՝ կողմ էր դրա պահպանմանը, քանի որ պայմանագիրը, այնուամենայնիվ, հանդես էր գալիս որպես սպառազինությունների տարածաշրջանային մրցավազքի զսպման որոշակի մեխանիզմ[26]: Սկզբունքորեն, տարածաշրջանի միակ երկիրը, որն իրականում շահագրգռված էր ԵՍԶՈՒ խարխլմամբ, Ադրբեջանն էր, որն ակտիվորեն սպառազինվում էր և ամենաբարձր մակարդակով հայտարարում Ղարաբաղյան հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու անհրաժեշտության մասին (այդ սպառնալիքները կյանքի կոչվեցին 2016 թ. ապրիլին՝ վերաճելով քառօրյա պատերազմի, սակայն նույնիսկ այդ պարագայում Ադրբեջանն ի զորու չեղավ լուծելու հիմնախնդիրը-Մ.Գ.):

Ստամբուլի հռչակագիրը ևս ղարաբաղյան հակամարտության կարգավորումը կապում էր Ադրբեջանի տարածքային ամբողջա-

[22] Стабульский документ 1999 года, Стамбул, 1999. http://www.osce.org/ru/mc/39573?download=true

[23] Տե՛ս նույն տեղում:

[24] Հակոբյան Թ., Ղարաբաղյան խնդիրը գագաթաժողովներում, 22/11/2010 www.report.am

[25] Федоров Ю., Адаптированный ДОВСЕ и интересы безопасности России // Ядерный контроль, т.10, # 4 (74), 2004, с. 101.

[26] Армения заявляет о готовности обсуждать проблемы по ДОВСЕ со всеми заинтересованными странами // ИФ Интерфакс, 17.07.2007, (http://www.interfax.ru/r/B/sng/14.html?id_issue=11791926).

կանության հետ: Թեև մենք արդեն քննարկել ենք Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի ողջ սնանկությունը, սակայն ՀՀ պատվիրակության կողմից Ստամբուլի հռչակագրի ստորագրումը (այսինքն Ադրբեջանի տարածքային ամբողջականության ընդունումը) ընկալվեց որպես հայկական դիվանագիտության պարտություն և հետընթաց քայլ Բուդապեշտի գագաթաժողովի ձեռքբերումներից, երբ Լեռնային Ղարաբաղը ճանաչվել էր որպես բանակցային կողմ: Ստամբուլի հռչակագրի ստորագրմամբ Ղարաբաղը նաև դուրս մղվեց բանակցություններից:

Հետագա տարիների բանակցային գործընթացում ՀՀ և Արցախի ղեկավարները նորանոր ուղիներ էին փնտրում հակամարտությունը խաղաղ կարգավորելու և տարածաշրջանում կայուն վիճակ ստեղծելու համար: ԵԱՀԿ շրջանակներում արցախյան խնդրով հետագա բանակցություններում ՀՀ-ն պաշտպանում էր այն սկզբունքը, որ վերջնական համաձայնությունը պետք է ստանա հակամարտության առանցքային կողմի՝ ԼՂՀ-ի հավանությունը: Ներկայումս էլ ՀՀ-ի համար հակամարտության կարգավորման հիմքը շարունակում են մնալ ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ամրագրումն ու դրա միջազգային ճանաչումը, ԼՂՀ բնակչության անվտանգության միջազգային երաշխիքների ապահովումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գալստյան Խ.,** Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), 2005 թ.:
2. Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը. Պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, խմբ.՝ Հարությունյան Ա., Եր., 2006:
3. **Հակոբյան Թ.**, Կարգավորման բանակցային գործընթացը, www.civilnet.am/news/2016/06/25/կարգավորման-բանակցային-գործընթացը/295704
4. **Հակոբյան Թ.**, Ղարաբաղյան խնդիրը գագաթաժողովներում, 22/11/2010 www.report.am
5. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ց. 5, գ. 84, թ. 114-115:
6. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ց. 5, գ. 84, թ. 46-47:
7. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994), հանրագիտարան, Եր., 2004:
8. Միջազգային կազմակերպություններ, ուսումնական ձեռնարկ, Եր., 2012:
9. **Օսկանյան Վ.**, Անկախության ճանապարհով, փոքր երկրի մեծ մարտահրավերները, նախարարի օրագրից, Եր., 2013:
10. **Абасов А., Хачатрян А.**, Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность, М., 2004.
11. Армения заявляет о готовности обсуждать проблемы по ДОВСЕ со всеми заинтересованными странами // ИФ Интерфакс, 17.07.2007, (http://www.interfax.ru/r/B/sng/14.html?id_issue=11791926).
12. Декларация Будапештской встречи на висшем уровне, http://www.osce.org/ru/mc/ 39558?download=true
13. Заявление действующего председателя обсе, http://www.osce.org/ru/mc/39543?download=true
14. Заявление делегации армении, http://www.osce.org/ru/mc/39543?download=true
15. НКР, История и современность, Степанакерт, 1998.
16. От Хелсинки до Будапешта. История СБСЕ/ОБСЕ в документах.1973-1994, в трех томах, т. 3, М., 1996.
17. Стабульский документ 1999 года, Стамбул, 1999. http://www.osce.org/ru/mc/39573?download=true
18. **Федоров Ю**., Адаптированный ДОВСЕ и интересы безопасности России // Ядерный контроль, т.10, # 4 (74), 2004.
19. Who we are, www.osce.org
20. **Vilen, Heikki, Mike Karie and Roger Biesel**, Preparations of a Peacekeeping Mission for the Nagorno-Karabakh Conflict by the OSCE' s High Level Planning Group, May, 2006.
21. OSCE. Documents 1973-1997.Organization for Security and Co-operation in Europe.CD-Rom.
22. LISBON DOCUMENT 1996, http://www.osce.org/mc/39539?download=true